

ՄԱՅԻՆ

ԿԱՆԱՆՑ ՅԱՏՈՒԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ ԸՄԲԱԹԱԹԵՐԹ

ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՑՏԱԿԱՆ

ՍՈՏԵԼՆ, ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ, ՆՈՐՈՇԹ

ԶԵՌԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆՅ

ԿԱՆԱՑԻ ՀԱՐՅԵՐՈՒ ԵՒ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՐԵՐՈՒ



Ի. ՏԱՐԻ

Բ. Նըշան, Թ/Խ 29



ՅՕՂՈՒԱԾՆԵՐ ՈՒՆԻՆ

ՏԻԿԻՆ ԻԾԿՈՒՂԻ ԷՆՔՍԷՐՃԵԱՆ
ՕՐԻՈՐԻ ՀՈՒՓՈՒՄԷՄԷՄ ԿԱՏՔԷՆՈՍԵԱՆ

ՕՐԻՈՐԻ ԱՐԱՔՍԻ ՆՈՒՐԵԱՆ

ՕՐԻՈՐԻ ՄԻՄԻ

ՕՐԻՈՐԻ ՄԱՆԵԿ ԻԾԹԱՄՊՈՒԼԵԱՆ

ԵՒ

ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՌՔ



Գ/ին 40 փարսա

Տպագրութիւն ԾԱՂԻԿ, Կալաթա.



Տ. ԱՅՐԱՅԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՊՈՒՆՈՑ ՀՍ.ՄՍ.Բ
Տարեկան 50 դրուչ. Վեցամսեայ 25՝ դրուչ :

ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ՀՍ.ՄՍ.Բ
Տարեկան 54 դրուչ. Վեցամսեայ 27 դրուչ :

ՍՐՏԱՍՍ.ՀՄՍ.ՆԻ ՀՍ.ՄՍ.Բ
Տարեկան 12 ֆրանք :

Ծանուցման, բաժանորդագրութեան եւ թերթին վերաբերող ամէն կարգի գործառնութեանց համար դիմել մի՛ միայն՝

{زاعيك غزته سي}

در اعلياده غلطه ده قورشونلي خاننده نومرو و

Շ Ս. Բ Ա. Թ Ա. Թ Ե Ր Թ «Ծ Ս. Ղ. Ի Կ»

Կ Պոլիս, Ղալաթիա, Գուրչունյու խան, թիւ 7

JOURNAL "DZAGHIK,"

Constantinople, Galata, Kourchoum Han, N^o 7.

Ա Տ Ա Մ Ն Ա Բ Ո Յ Ժ Մ, ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ամենավերջին դրութեամբ կը դարձանէ ամէն տե-
տակ ակոյսի եւ յինտի հիւանդութիւնները, փտած ակոտները կը
լեցնէ՝ առողջ ակոտներու պէս երկար առեն գործածուելու պայ-
մանաւ :

ԲՈՂՈՐՈՎԻՆ նոր մեթոտով, նուրբ, ճաշակաւոր և դիմացկուն
արուեստական ակոտներ կը պատրաստէ, բնականին ճիշտ նման :

Հիւանդ կ'ընդունի ամէն օր իր դարձանատան մէջ, Բերա, Մեծ
Բարձաք-Գարու փողոց թիւ 8 կարօտ հիւանդները ձրի կը դարձա-
նէ՝ հինգշաբթի օրերը Բերայի Աղքատախնամ դարմանատան մէջ :

Կիրակի օրերը ժամադրութեամբ կ'ընդունի:

1—50

ԲԾԱԽՆԴԻՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒՆ

Կը յանձնարարենք

Պ. ԿՈՊԵՌՆԻԿ ՍԻՒՏՃԻՕԳՂՂՈՒՆ,

Բձախնդիր երիտասարդը ամէնէն աւելի մէկ բանի ուշադրու-
թիւն բնծայել կ'ուզէ. իր օձիքին և թեւնոցներուն՝ նորագոյն
գրութեամբ օսլայուած և արգուկուած ըլլալուն՝ Իրաւ ալ, ար-
դուկէ արգուկ, մե՛ծ տարբերութիւն կայ, և չա՛տ քիչ օսլայա-
գործներ կան մեր մէջ, որոնք իրենց արուեստին տէրը ըլլան :

Այդ յիշերուն մէջ ամէնէն համբաւուածն է, Բանկալթիի
կողմը, Պ. Կոպեռնիկ Սիւտճիօղլուն, որ Բանկալթիի մեծ պողոտային
վրայ, զերեզմանատան դէմ, թիւ 25 կրպակին մէջ հաստատուած՝
լրին դիմող բոլոր յանախորդները գոհ կը ձգէ, փայլուն, ողորկ եւ
հաստատուն արգուկ մը տալով արանց ճերմակեղէններուն :

Մանուաւոր խնամքով մը կ'արգուկուին նաեւ հան, կանանց ու
տղոց ամառային զգեստներ ու զլխարկներ :

1—10

ՇԱՂԻԿ

Ճ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

(659) Ի. ՏԱՐԻ — ԹԻԻ 29

22 ՄԱՐՏ 1907

ԻՆՉ ՊԻՏԻ ԸՍԷԻՔ

ՃԵՐՄԱԿ ՄԱԶԵՐՈՒՆ



Ը կարծէ՞ք արդեօք, սիրուն ընթերցողիներս, թէ երկար ժամեր պէտք պիտի ըլլային ձեզի, լուծելու համար հետեւեալ հարցը, որ ուշադրութիւնս գրաւեց յանկարծ եւրոպական կանացի հանդէսի մը մէջ:

«Ո՞րն է այն քառասնամեայ կինը որ ձեզի ամէնէն աւելի հաճելի կը թուի. անիկա՞ որ արդէն իսկ ճերմկոկած մազերուն տակ կը պահէ լսազազ եւ լուրջ երեւոյթ մը, հաճելի աչուկներ, ժպտուն բերան մը, թէ ան՝ որ այդ ճերմակ մազերուն տակ կը կրէ դառնացածի երեւոյթ մը, քինախոյզ ակնարկ, խորչոմեալ ճակատ մը եւ չարաբոյր չրթունքներ:»

Կը հաւատամ սակայն՝ թէ այս հարցումին պատասխանելէ առաջ, արագ ակնարկ մը պիտի սահեցնէք նոյն այդ տողերուն վրայ եւ դժոհածի երեւոյթով մը պիտի ըտէք ինքնիրեննիդ. — Հեղինակը աղէկ չէ մարմնացուցած իր մտածումը, կամ սխալ մը սպրդած է շարադրութեան ձեւին մէջ, եւ թէ բնագրին մէջ եզոյ ճերմակ մազերը պէտք է ներկել սեւերու:

Ընդհակառակը. շատ լուրջ է առաջարկը, զոր քիչ մը աւելի ամփոփելով սապէս կրնանք ներկայացնել:

«Ո՞րը կը նախընտրէք, հաճելի՞ դէմք մը, թէ խոտու դէմք մը, մի՛շտ միեւնոյն ճերմակ մազերուն ներքեւ:»

Այս անգամ առարկէք թերեւս թէ չափազանց տղայական է հարցումը, և թէ մտացի խորհողի մը համար կասկած չի մնար բնա՛ւ վարանելու ա՛յնպիսի նիւթի մը մասին, որ արդէն իսկ բայցայտ է:

Բայց քիչ մը քիչ հաստատական պիտի ըլլայիք այն պարագային, երբ խորագէտ ուսումնասիրած ըլլայիք ներքինը այն կիսներուն, որոնք նուազ դառնութեամբ չէ որ իրենց ալեւորելը կը զգան, և ո՞վ գիտէ ինչեր չպիտի տային այն մոգական ցպիկին, եթէ դար երևակայական հպումով մը վար թափել ձիւնի պղտիկ ծուէնները իրենց փափուկ մազերուն վրայէն:

Երբ դեղեցկագիտական այլասերումի մը անուրանալի ու անողոք նշանները կը հասնին կնոջ մը վրայ, կարծես կը սմքի ա՛լ ան. խօլ ու անգիտակ տխրութիւն մը կը պղտորէ իրենց երազուն ներաշխարհը, բոլոր իրենց դեղեցկութեան պահպանման մասին տարուած ջանքերը կը խորտակուին, մէկզի՛ կը թողուն վիճաբանութիւնը, պայքարը, և դառնօրէն կը չարանան:

Բնակա՞ն է ասիկա: Քիչ մը աւելի խորերը թափանցե՛նք:

Ինչո՞ւ համար կին մը կ'ուզէ սիրուն երեւալ, հաճելի՞ ըլլալու համար, հրապոյրի ներազդեցիկ տպաւորութիւններով ուրիշները որորելու համար: Այո՛, և այս զգածումը բնական է, երբոր իր սահմանին, իր չափաւորութեան մէջ առնուի, և որ եւ է ուրիշ նպատակ չունի, եթէ ոչ անմեղ հաճոյք մը պատճառել, եւ կամ աւելի ճիշդ, հաճելի երեւալ իրեն և ուրիշներուն:

Խնդիր է միայն որ, երբ գեղեցկագիտական տարր մը կնոջ մէջէն կ'անհետանայ, ի՞նչ ընելու է ան սրամաբանօրէն. ինքզինքը լքելով թէ բռնելու է: Եթէ իմաստուն է ու հոգեբան, ոչինչ կը մնայ իրեն ընել՝ եթէ ոչ մնացած յատկութիւններուն հաւատարիմ պահապանը մնալ. այսինքն ըլլալ աւելի քաղցրաբարոյ, աւելի բարեացակամ, աւելի շնորհալի, որպէս զի բնախօսական երևույթներու քայքայումը փոխարինուի հոգեբանական տարրերու զարգացումներով և հաւասարակշռութիւնը հաստատուի մէկուն մահովն ու միւսին ծնունդովը:

Մազերուն ճերմկիլը ժողուն աչքերով չի դիտուիր, իրա՛ւ, և սուս կը խօսին այն ամէ՛ն կիները որ ձիւնէ գլուխ մը ունենալ կը բազման բաց ի այն պարագայէն երբ այդ բանը աւելի կը գեղեցկացնէ զիրենք. ընդհանրապէս և մեծամասնութեան մը համար տխրառիթ պարագայ մըն է յանկարծ նշմարուած ճերմակ մազի քանի մը թելեր. բայց հա՛րկ է որ այս պարագան իր ետեւէն բերէ յարակից կարգ մը անհաճոյ ազդեցութիւններ ալ, որոնք անհասը կը խաթարեն:

Կեանքի մէջ կը պատահինք ա՛նէն վայրկեան այս անխմաստ բացարձակութեան, երբ կը տեսնենք քաղաքի սղջրասէր կիներ, որոնք հրապարակաւ մեծ յարգ կ'ընծայեն իրենց գեղեցկութեան. եւ երբ անակնկալ պատահար մը դայ խոչընդոտ հանդիսանալ առնոնց առջեւ, փոխանակ իրերուն իրենց իսկութեան չափով կարեւորութիւն տալու, ինքզինքնին կը ձգեն, միայն այդ պարագան կ'երեւայ իրենց աչքին և օր ըստ օրէ մեծնալով ակուսր քողերու լայնասփռու ծիփանքներով կը փակէ անոնց տեսողութիւնը, ու, հոգեւին պարուրուած այդ ինքնատեղծ յիշատեցումը՝ չեն զգար այն գեղեցիկ ոյժերը որոնք դեռ իրենց մէջը կը մնան, կամ նոր կը ծնին:

Այսպէս, ա՛նէն երեսօթ անտեսելով կը դառնան քիչ քիչ անձնապաշտիկ, ջղախոտ, սնտոանելի ընկերակիցներ, որոնց հետ բախտը վարուիլ ճակատագրած է մեզ շատ անգամ, մէկ կողմ թողելով բացառիկ քանի մը զլուխներ, որոնք իրապէս պաշտելի են իրենց չարդէն իսկ ճերմկակամ մազերուն տակ, և կը պահեն խաղաղ և լուրջ երեւոյթ մը, հաճելի աչուկներ, նաեւ բերան մը ժպտուն:

ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՌՔ

Վ Ե Ր Յ Ի Շ Ո Ւ Մ Ն Ե Ր Է Ս

Փ Ո Ղ Ո Ց Ի Տ Ղ Ա Ն

Անցնող, ա՛լ հեռացող տարիներուն վերջիչումը՝ տարտամարէն, քաղցրօրէն կուգայ, կ'անցնի խոկումներու պահերու մէջ, անծանօթ հմայքով մը, ուրուադժուող այդ ստուերներուն անըջային ու մշուշոտ հեւքերովը: Յիշատակի արահետ մը կայ, որ կ'երկարի դալարագեղ բլուրներու, զեփեռին հրպուսէն դեռ դողացող թուփերու, նամէտ ու մառախրապատ լեռներու մէջէն, կ'երկարի երկարաձիգ մինչեւ հորիզոնին հիւր, մինչեւ հեռուի ստուերածուրի տարտամութեան խորը, արանե՛տը որուն մէջէն դացող ջրնջ ասմաղուն առուակի մը քրքիչը կը թրթռայ, կը խնդայ ու երազանքի պահերուն՝ անցեալ օրերուն աւազներովը փքացած անոր ծիծաղը կը լսուի՝ արձագանգին հեւացող, հեծկտացող տրոփումին մէջ, որ սրափում մը կուտայ հոգիին, մինչեւ ա՛յբիժ ու անմա-

տոյց ալ քերուն : Այն ռաֆիկ , տնկեղծ ու երկիրդած հաւատքով որով
հաւատացեալը փայտէ հինցած խաչին կը մօտենայ , պնդովին յա-
ռած երբեմնի կեանքի օրօրումներուն , անաղարտ մանկութեան մը
երազներուն մէջ կը թափառիմ , երկարօրէն անցեալովս կ'ապրիմ :
Տղայութեան անուրջներու , միամտութեան ու թարթափանքի օ-
րերուս , այդ կեանքիս հանդէպ հիասքանչ կը մնամ և ուրկէ մնա-
ցած առարկայ մը մասունքի պաշտամունքը ունի ինծի համար ,
սուրբ , անկեղծ , գլխովին փարող պաշտամունքը : Բայց միջոցը որ
դիս անկէ կը դատէ՝ անքակտելի թուօր մըն է , ուրկէ անդին անց-
նելու , վերտին ընդգրկելու , այդ օրերով ապրելու ըզմանքս իր
փոճկող տենդին մէջ պիտի սառի ու քայքայուի : Կը զգամ նաեւ
թէ մութը , որ այդ միջոցը կը ծածկէ՝ ժամանակէն թեւ առած կը
թանձրանայ , հետզհետէ աւելի՛ պիտի թանձրանայ ու այդ խաւա-
րին քողին տակ պահուրտող վիճը օրէ օր պիտի լայննայ , խոռո-
ջանայ : Հետեւաբար , վերջիշումը , որով ճիգ մը կ'ընեմ շարու-
նակ յիշատակին վրայ աղդելու , գայն վերլուծելու , անոր ման-
րամանութիւններուն անել ցտնցը քակելու , հետզհետէ մշուշի
մէջ կը ներկայացնէ դայն . բովանդակ հրապոյրը օրէ օր անխմանա-
լի , առեղծուածային հանգամանք մը կը ստանայ , առաջուրնէ
հրապուրիչ , աւելի աւինքնող , աւելի պաշտելի : Ու ծոող եղէգին
նման , որ հովին կատաղի յորձանքին հեռացումէն չվաղցած վերջս-
տին զլուխը կը բարձրացնէ կայտառ ու աշխոյժ ոստումով , կը
տեսնեմ ստուեր մը , որ մանկութեան թափանցիկ , մաքուր չղարչը
մէկ կողմ կը նետէ , որ լայն փոսէ մը կը ցատկէ բոլորովին ու-
րախ ու ծիծղուն և առաջին անգամ տարտամ թեթեւումէ մի յետոյ՝
ինքն սլ հմայուած պահ մը՝ շուրջինները մագնիսացնող ձգտումէն
եւ յառած նպատակէն , կը հետեւի անոնց : Մարդ եղող մանուկը
աստիճանաբար կատարելագործուելու , իր վերջնական ձեւին մօտե-
նալու տենդովը դողդոջուն , գերազոյն տեսականի մը անգոյ հը-
մայքէն արբչիւ կը քալէ անընդհատ , կը քալէ թափառական
հրեայի մը նման խեղճը , մինչեւ որ սրունքները խոնջէնքէն ծան-
րարեանունին , սայթաքումներէ վերքերով ծածկուած , ա՛լ պար-
տասած ու յախրացած՝ մեղկութիւններ հոգին պատեն :

Իր ընդգրկած երկրորդ կեանքին , մառախլապատ ու տխուր
այդ մթնոլորտին մէջ , որուն երկինքը արիւն չունի ու վարը ,
հողը յաւիտենս պէս ցեխերու մէջ թաթխուած է , ինչ յանկուցիչ
ու գրաստղ թովանքով մըն է որ կը ստուերապծուի յիշատակը
ա՛յցիչ օրերուն , թուող մանկութեան , սուրբ կեանքի մը , որ ա՛լ
անցեալին կը պատկանի : Մարդ իր կեանքին մէջ մէկ անգամ
միայն դալ ավարականին երազային հմայքը կ'ըմբռնէ՝ այնպիսի

տարտամութեամբ մը, որ անջնջելի հետքերու դրոշմը կը թողու սակայն. տղայ օրերն են անոնք: Այն ատեն կը զգայի ինչ որ աշխարհը կը ներգործէր վրաս, ինչ որ իմացականութեան առաջին զարթնումին հետ արթնցող բնազդը կ'ազդէր հետեւութիւններու եղբակացութեան միջոցին, երեւոյթներ, որոնք խորհրդաւորութիւն մը կը ստանային իմ քովս:

Այդ տարիքին մէջ միտքս անյազ կը մնար միշտ՝ դիտելու ու քննելու հուրովը վառուած շարունակ: Բայց հիւլէ մը սառնարանի կսկծող ցուրտէն ցատկելով կիսարաց դռնէ մը ներս մտած, մթնոլորտը պաղեցուցած է: Սենեկին պատերը ստուերներով լեցուն են, խօլ, դիւական ստուերներով, պատուհանին վարագոյրը դամբանական մութի մը մէջ կը պրկէ հիմա սենեակս, ձանձրոյթը՝ մենութեան հեւքերուն մէջ կը հեծեծէ: Այդ մթասքօղ լուսթիւնը անխօս է, համրի մը պէս լուռ և թիկնաթոռին յինական վրայ ինկած գլուխը մշուշապատ մեղկութեան թարթափանքովը կը արփէ: Մինակ եմ ալ ու ամայութեան խորհուրդը ունիմ, մարդոցմէ խոյս տալու՝ լեռներու սպիտակ արտեանին վրայ հեծող Մանֆրէտի մը պէս: Հոգիիս բովանդակ թափը հեծկլտացող սենեակին մենութիւններէն կ'ընդվզի, կ'ուզէ հորիզոն մը որ հիւ չունենայ, ունենայ նայուածք մը, որ պատերուն պատկերներուն ծամածուռ ըստուերին մէջ չի թափառի, ակնա՛րկ մը վերջապէս, որ կորսուի անհունութեան անյազուրդ միջոցին մէջ...

Ու այդ ներհայեցումի վայրկեանին է որ կապոյտ ու անոյշ խորչէ մը պատկերներ դուրս կ'ելլեն. այդ արահետին շաւիղէն ստուերներու տողանցում մը կ'երկարածուի. կը տեսնեմ անցեալ մը — տղու յոյզերով լեցուն անցեալ մը — որ բուրվառուած բոյրով մը օծուն է, անուշահոտ, զգլխիչ բոյրով մը՝ որ երազել կուտայ մարդուն: Վերջիչումիս մէջ մանրամասնութիւններ կան, որոնք տարիներու ուժգին սրբագրութեան տակ դեռ անջինջ մնացած են, չեն մոռցուած բնաւ, հարազատօրէն զգացումներուն մէջ բոլորովին անկեղծ, իրենց ներշնչել տուած թելադրութիւններով նոյն իսկ:

Շատ ազէկ կը յիշեմ մէկը անոնցմէ, որ այնչափ ուժգնօրէն սուր թափ մը սուած է նշոյլող զգայնութեանս թարթափումին: Տաք օր մըն էր, ամբան տօթակէզ օր մը երբ մօրս հետ դուրս պիտի ելլէի Բերայի վաճառատուններէն մէկէն նոր գլխարկ մը եւ ուրիշ կարգ մը պէտքեր գնելու համար: Պտոյտի, դուրս ելլելու ժամերը ինծի համար հրճուանքի պահեր էին, գեղեցիկ առիթներ՝ նոր բաներ տեսնելու ու դիտելու: Այդ օրը լատիններու տօն մըն էր, եւ երբ եկեղեցիին առջեւէն կ'անցնէինք, ներսը՝ աղօտ մթնո՛ւ՝

Թեան մէջ անյադ աչքերով ամբողջ կը դիտէի, արծաթեայ, ոսկեզօծ զգեստները, արեւուն շողէն ճաճանշող վառվառ խաչերը, որոնք տղու աչքերէն ներս փալիւուն ու շլացիկ խտխտումներ կը ներարկէին: Ճիշդ այդ օրը խընդրած էի մօրմէս, որ գէթ այդ ժամուն համար իր ոսկի ժամացոյցը վրաս կախէ, թախանձած էի, լացած ու քէն ըրած: Միւս մայրերէն աւելի ներողամիտ էր մայրս. կոյր հաւատքը ունէի թէ աւելի կը սիրէր զիս ան ու անոր այդ սերէն, որ իր յայանութեանը մէջ տկարութիւն մը դարձեր էր, շատ լու դիտէի օգուտ քաղել՝ փափաքած մէկ սուարկաս, խաղալիքս գնել տայու, գրեթէ շարժնումի զգայնութեամբ ծլած իղձս կատարուած տեսնելու: Մնողքիս մէկ հատիկն էի ու շփացածի հովեր ունէի վրաս: Հետեւաբար մայրս հիւանդ ըլլալու լու հեռապատկերէն վախցած, ախամայ հաւանած էր վրաս կախելու իր ժամացոյցը՝ նոյնպէս ոսկիէ շղթայով:

Հարկ եղած գնումները ընելէ յետոյ վերադարձին՝ ձեռքովս գնումներու տուփը սեղմած, հիացիկ, ժամացոյցը կը դիտէի, կը շոյէի զայն գուրգուրանքով: Ու այս հիացումիս մէջ՝ կողմնակի փողոցէ մը դառնալով՝ տխրասարսուռ ու մթասքօզ խանութներու տողանցումին մէջէն անցնելու պահուն յանկարծ ատոնց մէջէն ամծուխով սեւցած կարծես, խարխլած խորշ մը աչքիս զարկաւ, զոր քայքայուած գուռ մը՝ կոտորած ու աղտոտութենէն թափանձկութիւննին կորսնցուցած ապակիներ հաղիւ կը պարակէր: Դուռը բացուեցաւ ու դուրս կը յիշեմ այն խորունկ տպաւորութիւնը զոր ունեցայ. խաւարային այդ մթութեան մէջ ալեւծուփ ստուերներու օրօրումը կը դիտէի, անդուլ, յամբ երերումներ, մութ գլուխներ, մարած նայուածքներ, Չղաձիգ, տարտամ չարժումներ, որոնց ընդբաղխումներուն մէջէն՝ մրացած կոյտերէ ելող շոգիին նման երգ մը, արտաւոց ճիւղային երգ մը կը ստուարանար, դուրս կը պոսթկար: Կանգ առի՝ հետաքրքիր բայց վախկոտ, դիտելու՝ ծուած, կորացած քամակները, ծերունիի դահացած, փոսայած, մոմիացած դէմքերը, որոնք անօրինակ թափ մը, անհամեմատ ուժ մը կուտային երեւակայութեանս անյագուրդ տինդին և միեւնոյն ատեն ներսս յուզուող, քայքարող յուզումներուն խառնուրդին միացած: Բայց մօրս կոչը զիս կը կանչէ ու ընդոստ արթնցած մղձաւանջոտ յուզումէս, կը վազեմ մօրս հասնելու անկէ պաշտպանուելու՝ այդ մթաստուեր ուրուականներուն դէմ, որոնք ծիծաղ մը ունէին իրինց չրթունքին վրայ, անգութ, հեգնական ծիծաղ մը, որ կ'արձագանգէր՝ անկուփի վիհին խորութիւններուն մէջէն ցաւազինօրէն, որոնք չարագործի չարաշուք երեւոյթներ ունէին: Վազելու պահուս կը նշմարեմ տղայ մը, որ

այդ բացուած դռնէն զուրս ելած էր ու նկուճ կերպարանքով կը քալէր: Այս անգամ գրեթէ բոլորովին անվախ նայուածքս իր վրայ կեդրոնացուցած էի, զոր ինք ալ նշմարեց ու իր կողմէ մասնաւոր հետաքրքրութեամբ ինք ալ զիս դիտելէ վերջ, շարժումով մը, կոպիտ, տարօրինակ շարժումով մը, զոր շատ վերջեօրը հասկցայ, ընթացքը դանդաղեցուցած ու երեսը անդին դարցօնելով, անտարբեր կերպով ուրիշ բաներու նայեցաւ:

Հինգ վայրկեանի չափ տեւեց այսպէս ու երբ կամուրջին մօտեցանք վերստին անսայ զայն, որ առջեւէս կ'երթար այս անգամ աւելի մօտեցած: Խոհերուս մէջ թաղուած, հանգոյցները քակել կ'աշխատէի, և որոնց լուծումին համար տղոց միտք մը ի զ՛՛ւր կը մաքառէր, ստուերներուն տարտամ ստուերը իր ներհայացումը կուտար շարունակ թարթափող աչքերու առջեւ ու այդ երեւոյթներուն իրենց առթած սոսկումն մէջ, տխրասարուու, թանձր ու խաւարին մթութեան մէջէն թարթափող դուրի զգացումին առաջին նշոյլները կը զգայի յանկարծական ներշնչումի մը մէջ, որ նոր էր ինձի համար, առաջին անգամ ըլլալով, ուրկէ առաջ բնաղբի, հակումի կէս անգիտակից զգայութիւններ կային՝ ծնողքիս հանդէպ, զիս սիրող, փայտայող, զիս շփացողներուն հանդէպ: Սիրտը իր նշանակութիւնը կը ստանար ա՛լ երեւակայակա՜նին քով, գթութեան զգացումը՝ իր առաջին ցոլքերը կուտար լքուածներուն հանդէպ: Նոյն այդ տղան էր որ առջեւէս կը քալէր, ինչպէս ըսի այս անգամ աւելի մօտեցած ինձի, աւելի որոշ մանրամասնութիւններու կարկառուն գիծերով: Մերթ ընդ մերթ քայլերը կը դանդաղեցնէր, նայուածքը չեչտակի ինձի ուղղած, նայուածք մը, որուն մէջ տարօրինակ կերպով կը փայլէր անյագուրդ ու լիբը ընչաքաղցութիւն մը, կարծես բնածին կոպտութեան մը հետ, զոր զգայութեամբ կը բնորոշէի շարժուճեւեւրէն, քալուածքին ու ըրած դէմքին ծամածուճութիւնը՝ իմիներուս հետ կազմած հակադրութեամբ: Թէեւ տղայ, բայց ինչպէս որ պատահած էր ինձի, կերպարանքը, իր այդ քօղարկուած ստուերին մէջ ներկայացած պահուն, անոր խորը դիտելու, դժնդակ կերպով անոր ամէն մէկ փուլը վերլուծելու, ընդհանուր անհատականութիւնը երեւան հանելու և ճշգրտօրէն զննուած այդ մանրամասնութիւններով եզրակացութեան մը յանդումն կարողութիւնն իսկ ունենալէ առաջ, շատ անգամ նուրբ ու ճաշակի տէր զգայականութիւնը ներշնչումի սլացքը կը նետէ անոնց վրայ, ըլլա՛յ երեւոյթ և կամ իրողութիւն: Մարդ, շատ անգամ այդ մանրակրկիտ քննութեանէն աւելի, զգացումին ներշնչումէն հաճօյք կը կը զգայ ու դժնդակօրէն երբ հաստատուն վերլուծումով

մը գոյացուած քննութիւնը՝ կը ցնդէ ամէն կանխահաս զգացում, քայքայելով նաեւ երեւակայական բովանդակ չէնք, որ կառուցուած էր առաջ, երբ մարդ կը զգայ թէ պատրանքի ստուերն է ան պարզապէս, իր երազները խարոզ այս իրականութեան հանդէպ ցաւազին թոյրի մը փղծկումը կը վառի՝ տակաւին ըզձանքնորով լեցուն սիրտին խորը, որ աւազին վրայ մարող, ցրցքնուող փրփուրին հառաչը ունի: Այն ատեն առջինը կը նախընտրէ, պատրանքը կը փնտռէ՝ հոգ չէ թէ յուսախաբումովը օրօրուած ըլլար ան միայն: Ուղեցի որ այդ փողոցի տղուն նախնական տը պաւորութեամբը տողորուն գութի զգացումը ունենայի միայն ու ան մօտեցած չըլլար՝ իր բովանդակ նկարագիրը ինծի գուշակել չտալու համար:

Ակամայ, չուղեցի ես ալ իմ կողմէս աւելի մօտենալ այդ ըտկոտն տղուն, ա՛յնչափ որ ակնարկը վախ մը ազդէր՝ ինծի ու ընդհանուր կերպարանքը զգուանք մը. մօրս թեւէն բռնած, նայուածքս անդին դարձուցի ա՛լ չտեսնելու համար զայն:

Տարիներու ստուերներուն մէջէն երբ կը մտածեմ այդ տղուն վրայ, այն տարբեր ազդեցութիւններուն վրայ, տակաւինկը տեսնեմ զայն: Արեւէն հրակէզ դէմք մը՝ միացած քորջերով կարկտուած հագուստի մը հետ:

Դէմքը անկայունութիւն մը ունէր իր մէջ, ոսկորներուն մէջ փորուած կարծես փոսոտ այտերը յափշտակիչի դերը կուտային անոր. թանձր ու թուքէն փրփրոտ բերանը և երբեմն ատոր շուրջ կսզմուած գաղտնի ժպիտը չարութեան ուժգնութիւն մը կ'արտայայտէին: Աչքերը... իր էութեան բովանդակ նկարն էին անոնք: Ատոնց ակնարկներուն հեւացող անստուգութիւնը հոգիին թաքուն գաղտնիքներէն մէկը երեւան կը բերէր:

Առաջին անգամ, յուզումի զգայնութիւն մը փոխանցած էր ինծի՝ երբ տակաւին մօտէն չէի դիտած զայն. բայց աւելի մօտեցած ատեն դրեթէ տարօրինակ սոսկումով կ'ըմբռնէի այդ վազանցուկ կեղծ աղաչական նայուածքներուն խորը թաքչող ու պարփակուող լրբութիւնը: Գութի, վախի կրկնակ այս գիրկընդխառնումին մէջ առաջինն էր որ աւելի տարածուն հանգամանքով մը իր մէջ կը խղդէր գրեթէ սոսկումի մը հետքին թրթուացող կրծկումները և մեղքցող նայուածքս իրենը կը դիտէր, իրենը, որ կուրծքիս ուղղուած էր անյագօրէն:

Ակնթարթի մը մէջ ժամացոյցը իր շղթայովը մէկտեղ թռցուցած էր: Անկէ ի վեր ժամանակին ստուար էջերը մրոտող, ստուերամած զրուագներու տողանցումին մէջէն դեռ կը յիշեմ թէ շատ լացի, արդունքներ, որոնց հանդէպ ամէնէն քարսիրտն իսկ ցըն-

ցում մը պիտի կրէր գէթ. բայց չմեղքցաւ ան, երբե՛ք, որովհետեւ հիմա հասկցած եմ թէ անոր համար մեղքը գոյութիւն չկրնար ունենալ, արտաքին պաշտամունք մը որ ուզողակի իր ներքին զգայնութեան վրայ աղղէ վերջապէս իր բարձրաուումին մէջ կրօնք մը, գերագոյն պատճառ մը, որ իբր տիրող համարուէր այդ հոգիին համար, ներքին վախ մը ազդէր՝ կապտելու, կաշկանդելու անոր չար, նենդամիտ ձգտումները: Ուժը, բռնազդող, ճնշող ուժը՝ իր կրօնքն է, իր Աստուածը և արտաքին աշխարհի հետ ունեցած յարաբերութիւնները գրեթէ անկէ կախում ունէին: Շտտ լաւ կը յիշեմ թէ անոր յեղյեղուկ ու փոփոխուն զիմագծերը գութի յուզում մը իսկ չարտայայտեցին, որովհետեւ գութի զգացումը ատոնցմէ շատերուն համար գոյութիւն չէ ունեցած բնաւ: Անոնք մեքենաներ են որ կը գործեն՝ անդու ու յարատեւ գործունէութեամբ, կեղծել, աղաչել, յափշտակել ատոնք սովորած են ու ատոնք կրնան կիրարկել՝ անոնց գործադրութեանը մէջ ջանալով աւելի անթերի ձեւ մը տալ միայն:

Մայրս յանդիմանութիւն մը իսկ չրբաւ, բայց անխօս, այդ համր յանդիմանութենէն շատ աւելի պիտի նախընտրէի թերութիւնս երեսիս տուող խօսքեր, ապուշութիւնս որակող ածականներ: Ինծի ուղղուած այդ լուռ նայուածքին մէջ թաքուն պատիժ մը կար, այնչա՛փ զօրաւոր ու աղդու, այնչա՛փ կսլծեցուցիչ մինչեւ այն ատեն սիրուող, փայփայուող տղու մը համար և զոր վրէժխնդիր ցոյց մը պիտի կրնայի նկատել եթէ մօր մը միեւնոյն ատեն գթացող աչքերը ներումի զգացումը ջներչնչէին ինծի: Ինքն իր մէջ, ինքզինքս հարուածելու տուայտանքս, այդ տղուն դէմ սուր ատկութիւն մը մնուցանելու տենչս յանկարծական բորբոքումէ մը վերջ կը շիջէր՝ երբ կը լսէի հօրս զիս պաշտպանող խօսքերը ու այն ատեն կ'երթայի արցունքոտ աչքերով ծնողքէս ներում խնդրելու: Ներքին խանդավառող ուրախութիւնս ներկ կուտար ինծի՝ ինչպէս որ ներած էին ծնողքս, բոկոսն, ցնցոտիներ հագած այդ տղուն: մանուկ հոգիները շատ աւելի արագ, շատ աւելի անուշ կերպով դիտեն ներել յանցաւորին:

Հետեւեալ առտուն, տենդոտ երազէ մը հազիւ թէ կ'արթըննայի, հազիւ թէ սանդուխին գլուխը հասած էի, զիչերուան խաւարային ժամերուն մէջ յարատեւ կերպով կուտակուած խօր, տղայ մտածումներս իրենց կէս անգիտաից վիճակէն հազիւ թէ սթափած, տեղի կուտային եղբակացնող գաղափարի մը, որ չրթունքի վրայ եկած էր յեղակարծօրէն:

— Պէտք է ապրի՛ւ...

Կեանքի անհրաժեշտ օրէնքներէն մէկն էր զոր կ'արտաբերէի,

որուն նշանակութեան թափանցած կը թուէի ու բուրովին զեղուն երբ բառերուն վերջին երերումները իրենց թրթուումներուն հատնող հնչումը կը թափէին, կը վազէի մօրս վրայ ձեռքերը համբուրելու, անոր հրամանները ճշգրտին կատարելու, զայն շատ անելի սիրելու ներքին խոստումներով համակուած :

Հիմա մուրացիկ տղուն վրայ մտածելէ աւելի, մանուկին վրայ կը մտածեմ, տարիներ առաջ ինքզինքիս վրայ՝ ստուերոտ ու ալեծուփ ամպերու մէջէն, մութ երկինքի մը ծալքերուն տակէն զարթնումը կրող, փայլող ճառագայթի մը այդ սլացքը յարգանքով կը դիտեմ, սիրտիս երբեմնի փղձկումը, դժութեամբ ու սուկումով աւելի միամիտ սէրերս, ըզձանքի և տենչերու այդ ալեկոծ, փրփրադէզ ալիքները, որոնք անոր ալքերը կը կոծէին յարատեօրէն, անընդհատ : Արտաքին իրողութիւններու հանդէպ ներքին բնածին բնաղբները, մտաւորական դեռ զարթնումի առաջին ցուքը կրող կարողութիւնները՝ հետզհետէ ուսուցիչներ կը դառնան տղուն համար ու տեսարանը որ այդ իրողութիւններով լեցուն է բաց դիրք մը, որուն վրայ հակած խորհող մը մանրագրնին, հետադատող նայուածքով կը դիտէ, ուսիկը՝ անքննելի մը խորունկութենէն ապշած, երկրպագող ակնածանքով ու մանուկը, այդ մանուկը՝ հրեշտակային ժպիտով : Առաջինը իր մտածումներուն մէջ կը կորսուի ու անկարող պատճառները ծածկող քօղը քակելու միշտ խոհուն է ու մտածկոտ, երկրորդը ազերսող նայուածքով, որով մեղքերուն թողութիւնը, առօրեայ յաջողութիւն մը կը խնդրէ միշտ ու վերջինը հրեշտակային քնքուշութեամբ, որուն նայուածքին մէջ անբացատրելի անմեղութիւն մը կայ, ծափերուն մէջ գլխովին անկեղծութիւն ու նախաքայլ իր մտածումներուն մէջ՝ միամիտ, անկասկած ու խանդավառ ուժգնութիւն մը :

ՀՌԻՓՍԻՄԷ ՄՍՏՔԷՈՍԵԱՆ


Զ Ե Կ Ո Յ Ց

Գոնիաի և Գարամանի մէջ, Ծաղիկի գործակալ կարգած ենք Մեծ. Բենիամին էֆ. Գանիէլեան, որու կրնան դիմել Ծաղիկի բաժանորդագրուիլ փափաքողները :

ԱՄՈՒՐԻՈՒԹԻՒՆԸ



(ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ)



ՈՒՐ ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՋԱՏԱԳՈՎՈՒԻ

Կը ներուրի անշուշտ ինձ, երբ յանդուգն ուսումնով մը, վոխանակեալէն՝ փոխանակողներու, դրամօժիտէն՝ ամուրիութեան հարցին առջեւ կանգ կ'առնեմ. չկարծուի սակայն թէ ամուրիի մը կեանքին պատմութիւնն է որ պիտի ընեմ. ո՛չ, ամուրիներու՝ կամ լաւ եւս կնոջ մը գրչին համար քիչ յախուռն ինքնին՝ երիտասարդութեան, բարոյական, ֆիզիքական և տնտեսական տեսակէտները համեատ գրչիս ներած չափով ուսումնասիրութեան բովէ մը պիտի անցընեմ այսօր:

Ուրեմն անցնինք մեր նիւթին:

Կեանքը երկու երեւոյթներու հսկողութիւնը կը վայելէ, վիշտ եւ հրճուանք. երկուքն ալ բնութեան հարազատ զաւակները, երկուքն ալ անխուսափելի, երկուքն ալ անորոշելի, մեր կամքէն անկախ տխրաններ: Գիտէ ցաւատանջ յղին՝ թէ արգանդը դեղեցիկ, հանճարեղ, բարի երախայի մը թաքստոցն է, գիտէ նոյն իսկ թէ հոգի մը լոյս աշխարհ բերելէ վերջ՝ դեռ նորածինին թոթով լեզուն չբացուած՝ ինք երկրէս չուել ստիպուած է երբեմն: Գիտե՞նք թէ բնութիւնը ինչեր վերապահած է վաղը ամառուան համար, գիտե՞նք թէ այսօրուան ճոխ կեանքերնիս վաղն ալ պիտի շարունակուի. գիտե՞նք թէ կեանքերնուս իբր ընկեր ի՞նչ տեսակ մէկը մեզ կը սպասէ. անշուշտ ոչ. ուրեմն ճակատագրականօրէն ինչպէս տխուրը սեւը, նոյնպէս զուարթը եւ երջանկապարգեւը հաւասար սիրով կրել մեր ամենուս պարտականութիւնն է: Այս պայմաններով է որ ընկերային ներդաշնակութիւնը կ'ապահովուի և այս դիժէն շեղելով ըմբոստացողը կ'իյնայ ու կը մեռնի անխուսափելիօրէն: Այսինքն՝ կեանքի այլազան շրջանները իրենց պահանջները ունին: Ինչպէս որ անօթութիւնը ամորթակը կը գրգռէ, անքրնութիւնը քունին հեշտանքները, չարաչար տքնութիւնը, առաջացեալ տարիքը հանգստութիւնը կ'երազէ, կենդանական ամենազեղեցիկ շրջանը երիտասարդութիւնն ալ՝ զգայական հեշտութիւններ կը ծնցնէ, այնպէս որ բնականօրէն օր մըն ալ մասնջ թէ ազլիկ, իր անդրանիկ բարեկամը, մայրը՝ որուն զուրգութիւն տակ աճած է, տափակ անբաւական կը դտնէ, ինչ որ իրեն ալ քանի մը տարի առաջ անհաւատալի պիտի թուէր, և տարբեր, ա-

ւելի մտերիմ յարաբերութիւն մը, տարբեր սէր մը կ'երազէ որ իրենինին համապատասխանէ, իրենինին չափ ապրի: Ինչ ազնիւ ու սրբազան ներքնազգացում մը կ'ունենայ այն աստն ենթական՝ որուն գաղափարները ցրուած ու անորոշ բաներ էին թէեւ, և սակայն սէրին մոգական ազդեցութեանը տակ կ'այլափոխուին յեղակարծ, և արտայայտել կուտան ինչ որ կայ ենթակային սրտին մէջ: Յարգելի ընթերցողուհիներս, երիտասարդութեան չըջանը տուփանքի, մոլութիւններու, կամ առաքինութեանց — եթէ ունինք — մարտընչումով չազախուած է, և վայ անոր որ ինքզինքը տկար, անկարող կը գտնէ, մեռցնելու ինչ որ տգեղ է իր մէջ:

Կեանքի սա *crise*ին ենթակաները երկու այլազան օրինազիծ ունին առջեւնին զրուած: Ա. Բնական կամ Աստուածային օրէնք: Բ. Եկեղեցական իշխանութեան օրէնք:

Եկեղեցական կամ կուսակրօնական կանոնագիրը սանկ կրնայ ամփոփուիլ որ, մարդկային տկարամտութեան կնիքը կը կրէ իր պահարանին վրայ, որովհետև Արարիչը կուսակրօններուն զգայարանքներ շնորհած միջոցին արգիլեց անոնց գործածութիւնը եւ փորձութիւն մը անոնց դատապարտութիւնը պիտի ըլլայ:

Անդրադառնալով բնական կամ երկնայինին:

Աստուած զգայարանքներ շնորհեց մարդոց, զանոնք չափաւորապէս գործածելու համար:

Եւ որովհետև բացայայտօրէն բնութիւնն ու Ս. Գիրք մէկ լեզուէ կը խօսին՝ կը հետեւցուի թէ բնութեան օրինաց դէմ առնըւած քայլ մը Տիրոջ ձեռակերտը թերի գտնելու կը միտի, ինչ որ ուղղակի քրիստոնեային անկումը փճացումը կը նշանակէ:

Կենանք հոս պահ մը, եթէ զլուսնիդ չդառնար կուսակրօնական հարցին չուրջ թեւածելուս համար:

Զարմանալի . . .

Եթէ մեր սերնդագործելու զգագումները զսպենք, մեր կեանքը, խորհրդածութիւնները ուրիշի մը հետ չբաժնենք, Աստուծոյ հաճելի կ'երեւինք՝ կ'րաէ կրօնականը:

Բայց տեսնենք որչափ իրաւցնէ է այս ջատագովուած ամուրիութիւնը, — այսինքն սխալ չհասկցուի՝ կուսութիւնը?? — արգարութիւն, անմեղութիւն, ինքնամփոփութիւն կրնայ նշանակել: Միթէ ամուրիի հակումները, հատցնող երիտասարդական կիրքերը, կիղիչ տենչանքները հողուոյն վրայ թանձր ու ճնշող քօղ մը չե՞ն նետեր. միթէ յաւերժական խղճի խայթ մը, ուխտին դէմ զղջում մը, Ս. Խորանին առջեւ ճնրադրող կուսակրօնին մէջ չա՞րթննար:

Կաթոլիկ եկեղեցւոյ չեմ յիշեր որ Սրբազան Հայրն է որ կուսակրօնութիւնը անսաղարտ պահելու համար *sœurs*ը կամ

Schwesterները կը խրատէ որ ծոմապահ ըլլան, ցանցառօրէն դուրս ելլեն, ամուսնացեալներու հետ յարաբերութիւնը շատ առաջ չտանին, միս չուտեն, գինի չխմեն, որպէս զի իրենց պիղծ փափաքները չարթնան, եւ սապէս պատուիրած է անոնց «Ձեր մենակեաց մտարներուն վերեւ փոխադրուելով՝ թող անկողիննիդ արցունքներովնիդ ոռոգուի, քունը ձենէ խոյս տուած միջոցին ձեր երկնային ամուսինը յիշելով աղօթեցէք, Ան ձեզ կը լսէ. մինչև իսկ եթէ զինքը ձեր մօտ կանչէք՝ դուռներնիդ զարնելով, — ահա ես եմ բացէք որ ներս մտնելով ձեզ հետ ընթրեմ, — պիտի պատասխանէ, ասանկ պարագայի մը զգուշացէք իրեն պատասխանելէ, — հանուած եմ ինչպէս հագուիմ, ոտքերս լուացած եմ ինչպէս աղտոտեմ, — առանց այլեւայլի դուռներնիդ բացէք, սիրովդ կը վառիմ հծծելով» :

Բարեբախտաբար մեր եկեղեցին քոյրերու այդ խուժանէն ազատ՝ նոյնին քիչ շատ փոփոխեալը՝ երիտասարդ վարդապետներու ականջն է որ մոյնել կուղէ այդ խօսքը :

Իրաւ որ՝ ինչպէս այդ քոյրերը նոյնպէս և մեր ամուրի եկեղեցականները զօրացնելու, մարմնական փորձութեանց դէմ զինելու համար թափած մեր ճիգերը միամտութիւններ են բառին բովանդակ րոտումով :

Դարձեալ չմոռնանք ըսել թէ նոյն Սրբազանը քիչ մը անդին անձնական փորձառութեամբ կը հաստատէ թէ մարդուս՝ բնութեան դէմ մաքառելու փորձերը միշտ անկարող մնացած են սակայն :

«Երբեմն տխուր ու ամայի անապատներու ծոցը հատած մարմնոյս մէջ սպառնիչ ցնցող բան մը կը սողոսկէր, լաւ կը յիշեմ որ ահողջ շարաթներ անօթի ծարաւ հիւղակս մտնել համարձակած չեմ հոն՝ ուր այնչափ յանցապարտ մտածումներ սնուցած էի» գրելով կը փակէ կեանքին տխուր մէկ էջը :

Ահա՛, երկսեռ ընթերցողներս, կուսակրօնը և իր կեանքը. կեանք մը որ մէկ կողմէն եկեղեցական միւս կողմէն՝ ընական օրինաց մէջտեղ կը ձնչուի :

Երբք չմոռնանք սա խօսքը թէ «մարդէն միայն մարդկային՝ ը կրնայ պահանջուիլ ո՛չ հրեշտակայինը» :

Արդէն երկրային ներդաշնակութիւնն ալ հոս կը կայանայ : Քրիստոս ի՞նչ պատասխանեց զինքը փորձելու համար ամուսնութեան վրայ խօսող Փարիսեցիներուն : «Այն որ մարդը ստեղծեց արու եւ էգ ստեղծեց, ուստի այրը հայրը մայրը ձգելով կնոջը պիտի միանայ եւ երկուքը պիտի կաղմեն մէկ մարմին» :

Որ զուգեաց Աստուած՝ մարդ մի մեկնեցեք :

Ահա այս պարզուկ խօսքերուն մէջ կ'ամփոփուին մարդկային

երեք մեծ պարտականութիւնները : Ծնանելու պարտականութիւն ,
բնական օրինաց հանդէպ պարտականութիւն , բարոյական պար-
տականութիւն :

Ամուսնութիւն , ամուսնութիւն կը գոչէ Սուրբ Աւետա-
րանը , և նոյնը կը կրկնէ մարդու սիրտը որուն՝ մէյ մը տրուած է
սիրել :

Ուրեմն եկեղեցին ի՛նչ սկզբունքներով կուսակրօնութիւնը կը
պահէ ու կը քաջալերէ . շատ երախտապարտ պիտի մնայի այս
մասին զիս լուսաբանող հաճողին :

* * *

Բայց ցաւալի է որ ամուրի մնալու ուխտը կուսակրօնական
չըջանակէն զոտ՝ աշխարհականներու ալ վարդապետութիւնը գառ-
նալու բնոյթը կ'առնու կարծես : Քնթէ չամուսնանամ , երջանիկ ու
խաղաղ պիտի սպրիմ՝ կը կրկնէ դարավերջիկ երիտասարդու-
թիւնը :

Ի՛նչ այլասերում բարքերու :

Եւ մենք դիտակցութեամբ կը նուիրագործենք կարծես այս
ահուելի սխալը , երբ ամուլը կը փառաբանենք՝ ընկերային սպաննիչ
մանրէն՝ ամուրի ցոփակեացը , կը պատուասիրենք :

Նախախնամողը իր շնորհը ամէն վայրկեան , ամէն օր կը
քաշիտէ երկրիս , իրարու լրացուցիչ տարասեռ զոյգեր պարգեւելով :

Ընտանեկան կեանքէ դասալիք անբարոյ այրիները թող գիտ-
նան որ ժողովուրդի մը սկզբունքները ի՛նչ որ ալ ըլլան , կլինը հոն
իր մասնաւոր ազդեցութիւնը ունի , թէ կիները ինչ որ են , իրենք ալ
նոյնն են , թէ կանանց արժանիքէն կախեալ է այրերու իմաստու-
թիւնը ինչպէս կանանց բարօրութիւնը արանց առաքինութենէն :

Կնոջ ճշմարիտ բարեկամութենէն որքան հեռանան այրերը՝
այնչափ շուտ կը գահավիժին : Հո՛ն , ուր կինը իր իրաւանց տէրը
ճանչցուած ու յարգուած է , հո՛ն կատարելութիւն և իմաստու-
թիւն կայ . ուրեմն այրերու ամուլ ընթացքը մտաւորական տեսա-
կէտներով ալ վնասակար մոզէտներ կը հանդիսացնէ զիրենք :

Բնութիւնը կը պահանջէ որ ճշմարիտ սէրը , զգացմանց եթե-
րայինը , քաղաքակրթութեան միակ իսարիսխը մնայ և Սէրն ալ
իբր Տիրոջ փոխանորդը , կը բաղձայ որ մարդիկ մեղկութենէ , ան-
գործութենէ , գազանային կիրքերէ հեռու ապրին , որպէս զի թա-
ռելու արժանի բոյն մը գտնէ :

Դո՛ւք , վաւաչոտ ամուրիներ . չատե՛ր սիրած էք , բայց ձեր տա
սպիկար կեանքին մէջ սէրը ինչէն չէք ճանչնար : Դո՛ւք չատերու
հետ կենակցած էք , բայց վայրկեան մը չէք զգացած ա՛յն թրջը-

ուանքը՝ զոր ամուսնութիւնը միայն կրնայ պարգեւել: Ամուսնութեամբ, մարդ իր պարտականութեանց հետ իր զօրութեան, կարողութեան ալ աճումը կը զգայ, նոր թափով մը նոր նոր գործեր կ'որոնէ, ու իր անունը չմուցնէր: Գալով ձեր ապրելակերպին՝ խոստովանեցէք անձամբ, թէ անիմաստ եղիլի բան մըն է, ճիշտ այն հոգեւոր ծերուկին պէս որ բժիշկէն սանկ գեղազիր մը կը խնդրէր. docteur սիրուն սիրողներս վայելելու համար դեռ քանի մը օր, քիչ մը strichnine, հաւատացէ՛ք, ինչ որ պահանջէք կը վճարեմ... և սակայն քիչ վերջ շինքը կողոպտելու համար սիրաշահող սպասաւորին բազուկներուն մէջ հոգին կ'աւանդէր:

Ի՛նչ պիտի ըլլար հապա սիրոյ տեղ անասնական հեշտութեանց նուիրեալ մարդու մը վերջը. իր մէջ կենդանին մարդը սպաննած էր կամ թէ անբանային կեանքը (եռ)ը սպաննած էր և բարի հօր մը երանութեան տեղ վերջին քունը շնական ցանկութիւններու օրօրովը կը սկսէր:

Ամուսնութիւնը իր բարոյացուցիչ և քրիստոնէավայել պարտականութիւն մը ընկերաբաններու կողմէ ճանչցուելէ շատ առաջ, դարձեալ կը կրկնեմ, Մեծ Իմաստասէրը ճանչցած ու յորդորած է ատոր պէտքը, տիեզերական կերտումի բազմապիսի ձեւակերպութեանց միջոցին՝ այր մը և իրեն ընկեր կին մը իբր նախամարդ ստեղծելով: Այս համեմատութիւնը պահուած է և ամէն այր պարտի իր ընկերուհին ունենալ:

Ամէն բանէ առաջ սերնդագործելու օրէնքը պէտք չէ կապտըլի:

Հոմէր ի՛նչ գեղեցիկ ասացուածք մը ունի այս մասին: Զիրար երազող զոյգերը ամբողջի մը մասերը կը նկատէ որոնք զիրար վերստին կը գտնեն որոշ ձեւ մը կարեւորութիւն մը ա՛յն ատեն միայն ստանալու համար:

Եւ որչա՛փ իրաւամբ. թերի, տկար հոգի մը կրնա՛յ մաքուր զգացումներ, ըզձանքներ սնուցանել, կրնա՛յ առաքիլի, համեստ, արդար, պարկեշտ նկատուիլ կամ նոյն իսկ կրնա՛յ ամենափոքր ձախորդութեան մը տոկալ:

Այրե՛ր, ուր որ ալ գտնուիք, ինչ դասակարգի ալ որ պատկանիք, կնոջական անձնութեան կը կարօտիք, նոյն իսկ ձեր անձը դուք ճանչնալու համար, եւ կնոջական անձնութիւնը միշտ վեհանձն բան մը ունի իր մէջ թէեւ երեւութապէս տկար՝ իր սէրն է այդ, իր գոյութեան նպատակը:

Ծնո՛ղներ, առաքիլութիւնը ընդհանրացնելու համար երիտասարդութեան՝ ճշմարիտ սէրը և ինքզինքը սիրցնել տալու գաղտնիքը ներշնչենք. իճեալ սէրը դէպի գեղեցիկ հակում մըն է, ու

յաւիտենական՝ ինչպէս իր ցնորքներն ու երազանքները: Ինչո՞ւ երբ կոյսը չըթնեքը սիրահարին չըթներուն՝ սիրտը անոր սրտին կը կցէ, միայն ակնարկը վեր անծայր եթերին ծոցը գամուած կը մնայ:

Նուիրական արարողութեան նուիրական positionն է այդ, հոգիդոնին չափ անը Իսնելի հաւատարմութիւն մը կ'երկնուի հոն լուիկ:

Աղնիւ հայուհիներ, մի՛ հաւատ ընծայէք այրերուն, որոնք մեր տէրը կը հուչակեն ինքզինքնին զօրաւոր սեռի պէս տիտղոսներ վերապահելով իրենց: Մենք ենք հեղինակը, մենք ազդեցիկը սիրահարի, ամուսնոյ, զաւակի վրայ և որ ի կարգին: Անոնց փառքը, պատիւը, գիտութիւնը դարձեալ մերն է, քանի որ ներշնչողն ենք իրենց:

Վեհանձն անձնաւորութիւն մը Պայրըն՝ կարեւոր ձեռնարկի մը առջեւ կը տատամսի հակառակ բարեկամներու դրդումին, եւ երկու վայրկեանի խորհրդածութենէ մը վերջ կը պօռայ. «Եթէ այն կինը հոս եղած ըլլար ձեռնարկած պիտի ըլլայի այս գործին. իրաւամբ մարդս զէպի փառք եւ պատիւ առաջնորդող պահապան հոգին՝ կինն է»:

Եւ մտածել թէ մարդկութիւնը երկայն դարեր թերացած է հասարակային այս օրինակ կարեւոր գործիչի մը արժանավայել յարգանքն ու կարեւորութիւնը ընծայել, թէ բարոյագէտներ կնոջ օգնութիւնը, գործակցութիւնը հայցելու սեղ դայն տկարացնել ջանացած են, թէ օրէնսդէտներ կիները նոյն իսկ թշուառներ նկատելու չափ յառաջացած են!!!

Շատ պարզ է ինքնին պատճառը. *cherchez la femme*ի հերոսները կ'անդիտանային թէ կինը եթէ աւեր մը, չարիք մը գործել կարենայ՝ ա՛յն ալ ուղղակի այրերէն կրնար ծնիլ:

Ափսո՞ս. նոյն իսկ կնոջ հողի մը ունենալն իսկ միջոց մը տարակուսանքի ենթարկուած է ի հող դարձող երանելիներու կողմէ:

Այսչափ դրկումներու, անիրաւութեանց նշաւակ ըլլալէ վերջ, կինն է որ դարձեալ մարդկութիւնը քաղաքակրթած է նախապէս իր գեղեցկութեամբ՝ *galanterie*ի ձեւին տակ իրեն շուրջ շրջանակ մը ստեղծելով: Եւ այս թերեւս պատմութեան ամէնէն ազբերգական երեսը կը ներկայացնէ պանծացնելով կին տարրը:

Մտացի ընթերցողներս, ոչ զրէք թէ «այս օրուան ամուրիի այս կեանքերնիս աղէկ է» ըսող եղկելիները եթէ իրենց վայել զոյգը գտնելով մէկ պիտի տառապէին, հիմա երեք կը տառապին, արդեօք չի՞ն գիտեր թէ ամուսնութիւնը եթէ ըստ իրենց՝ տառապանաց, դժուարութեանց խորխորասն ալ ըլլայ, գոնէ բարով վերջ մը ունի, մինչդեռ իրենց հանգստաւէտ անուանած կեանքերնուն վերջը՝ Փրկիչը, խանի մը անկիւնը և կամ մօտակայ արծաթաւէր աղզականի մը կեղծաւոր բազուկներուն կը յանգի:

ԻՍԿՈՒՂԻ Գ. ԷՆՔՍԷՐՁԵԱՆ

Մ Ի Մ Ի Ի Ն Օ Ր Ա Գ Ի Բ Ը

Շ Ա Ռ Ա Թ

Ճակատագիրս այս վայրկեանէն կախում ունի:
Եթէ Աստուած ուզէ, այսօր պիտի աճումնանամ... զրակա-
նութեան հետ:

«Աղջիկտես»ի կ'ելլեմ այս առաջին յօդուածովս. ասոր պէս
բան մը, ուրիշ նմանութիւնով մը գէթ չեմ կրնար հասկցնել
միտքս:

Շատեր մեր գրողներէն փորձած են իրենց օրագիրը գրել,
աշխատութիւն մը, որ եթէ յաջողութեան յանգի՝ ծախանարելի է
ամէն պարագայի մէջ:

Եւ եթէ համաստութիւնով, առաջին զրոթիւնս, օրագի-
րէս քաղուած այս էջերը կ'ըլլան, պարզապէս յառաջաբանի մը
պէտք ունենալս էր, որով կարենայի մտնել զրական աստղաբե-
ղէն ներս:

Բայց... սիրտս կը բարակէ, աղջիկտեսի ելլող բոլոր ամուս-
նացու աղջիկներու սիրտին պէս, դէմքիս վրայի վարդագոյնը ան-
հետացիր է, ձեռքերս կը դողան, և լեզուս բռնուած է:

Արդեօք պիտի հաւնուի՞մ: Որովհետեւ, ճակատագիրս այս
վայրկեանէն կախում ունի:

Գրական փեսացուներէն Չիֆթէ Սարաֆ, թերեւս զիս տղայ
գտնէ Մաթիւտ Սէրայրի քով:

Մերուժան Պարսամեան միտքէն պիտի ըսէ. «անանկ կ'երևայ
որ այս օրիորդը ոտանաւոր գրել չգիտեր, եթէ ոչ՝ առաջին անգամ
բանաստեղծութիւնով մը հրատարակ կը նետուէր»: Եւ չպիտի
հաւնի ինձի բնականաբար:

Հրանտ Մամուրեան չպիտի ներէ ընթացքիս, Մաղիկին աշ-
խատակցելու համար: Եւ պիտի աւելցնէ որ տարտամ խառնուած-
քով, անորոշ գիծերով bas bleu մըն եմ:

Եէլքէնճեան շատ պզտիկ պիտի գտնէ զիս, իրեն տարիքին
հետ բաղդատելով իմինս, և պիտի մտածէ որ ինչո՞ւ «սարքել»ով
չեմ սկսած յօդուածս:

Արամ Անտոնեան թերեւս զիս շատ ամչկոտ, համեստ գտնէ:
Տօմնօ չըջաղգեստիս գոյնին պիտի չհաւնի:

Ու բաղդս պիտի վճուուի, այս եղանակով: Եւ կրնայ պատու-
հիլ որ ասոնց մէջ, կարապետ Ստեփանեանի կամ Եղուարդ Գօ-
լանճեանի պէս մէկը զայ և հաւնի ինձի, ու յաջորդ օրը բնակա-
րանս ներկայանալով ձեռքս խնդրէ ծնողքէս:

Եթէ աշխարհ վրաս փլչէր, սասանկ սարսափահար չպիտի ըլլայի :

Ես ալ իմ ճաշակս և նախընտրութիւններս ունիմ, հակառակ անոր որ «աղջիկաեա»ի ելած եմ :

Ընթերցողներէս շատեր պիտի տրամաբանեն, այս առաջին օրագիրս կարդալէ վերջը. — Ծաղիկին մէջ գրող սա Միմին չէ : Հի՛չ ալ ազուր չի գրեր : Ասոր բողբոջին հակառակը մտածողներ ալ դանուին գուցէ, սակայն ի՞նչ օղուտ որ անգամ մը համարաւ քննութիւններու բովէն անցուցած պիտի ըլլան արդէն :

Ի՞նչպէս, գո՞ մնացի՞ք ինձմէ : Ա՛լ Ծաղիկի վարկներուն կը ձգեմ մնացածը :

Չըսի՞ որ սիրտս կը բաբախէ, և ձեռքերս կը դողան յուղումէս :

Ուրեմն, ներեցէ՛ք որ քիչ մը հանգիստ առնեմ :

* * *

Այս կատակաբանութիւնները մէկդի դնելով լրջօրէն խօսինք նիւթի մը վրայ, որ ընթերցողը և գրողը հաւասարապէս կը շահագրգռէ :

Գրող մը ե՞րբ կրնայ ժողովուրդին ամէն դասակարգերէն կարգացուիլ : Անուսի հմայքը երբեմն այնքան մեծ, այնքան կարեւոր դեր մը կը խաղայ որ, գրողին ամէնէն յաջող արտադրութիւնն իսկ ծափերու որոտընդոտտ փառաբանութիւններով կ'ողջունուի : Միտքէս երբեք չեմ անցընել «օրուան գրողը» ըլլալ յանկարծ, օրագիրի այս տարտամ բայց յատկանշական տողերով : Յատկանշական ըսի, անոր համար որ յուշատետրի մը մէջ նօթագրուելիք հատուածները պէտք է ամէնէն առաջ անկեղծութեան և իրականութեան դրոշմը կրեն. այս երկու առաւելութիւններով օրագիր մը կրնայ հաճելի դառնալ : Մեր մէջ օրագիրնին հրապարակողները անոնք եղած են, որոնք քիչ մը չափազանց սերտօրէն կապուած են անկեղծ գրականութեան քղանցքներուն :

Ուրիշ ի՞նչ նիւթերու վրայ կրնայի գրել, օրինակի համար :

Հին գրող մը չեմ որ, Յարութիւնեանի պէս, անցեալ տարուան Ծաղիկի մէջ հրատարակած պատուական ոտանաւորի թարգմանութիւնը վերջին Արեւելեան Մամուլին մէջ հրատարակել տայի նորէն :

Կաղանքը այնքան մօտ չէ որ, գրագիրուհիի մը պէս հասակս նոճիի նմանցնեմ, ձայնս չեմ գիտեր ինչի, յետոյ այս բոլորը բացատրութեան նորօրինակ ու յանկարծական tournureով մը, նոր Տարիին յարմարցնելու համար :

Երաժշտութենէ այնքան ալէկ չեմ հասկնար որ, Պ. Ահարոն

Մարեանի երաժշտական հանճարին վրայ հիանամ, քրոնիկի մը նիւթ ընելով զայն, իր վերջին նուագահանդէսին առիթով:

Բարեկեանդանը եթէ անցած չըլլար, զիմակ մը կ'առնէի, եւ «Մամուլին շուրջը» վերնագրով յօդուածներ կը հրատարակէի, աւտոր անոր չի հաւնելով և մի' միայն ինծի հաւնելով:

Վերջապէս ես տարբեր ես մըն եմ, տարբեր խառնուածք մը, նկարագիր մը:

Ու բոլոր այս ետասիրական գովաբանութիւնները անոր համար որ, կ'ուզեմ ինքզինքս հաւնեցնել տալ ձեզի:

Տեսայ որ կարեւոր է այս պարագան:

Չէի՞ ըսեր յօդուածիս սկիզբը թէ «ազջիկեան»-ի կ'ելլեմ կոր այսօր ընթերցողներուս առջեւ, այս առաջին գրութիւնովս:


Ճակատագիրս այս վայրկեանէն կախում ունի:

Մ Ի Մ Ի



ՔՆՆԱԳՐԱՅԱԿԱՆ

ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ



Մկրտիչ Յ. Ոսկինար, սպագր. Միֆալիսի
Տրապիզոն, 1905 — էջ 86

Ծաղիկի 25րդ թուոյն մէջ կար ու ձեւի պէտքը մասնաւոր յօդուածի մը նիւթ ըրած էինք: Ասեղնագործութիւնը ոչ նուազ մաս առտնին զբաղմանց կամ համեստունակ միջոց մը ապրուստի, կը ներկայանայ մեր առջեւ, գրեթէ հաւասար աստիճանի վրայ. ուրեմն մեր այս յօդուածին նիւթ պիտի ընենք հրատարակուած վերոյիշեալ երկը որ կոչուած է ծառայել հայ աղջկանց իբրեւ առաջնորդ մը այդ ճիւղին:

Պ. Ոսկինար՝ մեր սեռին կը նուիրէ իր անդրանիկ գործը, բաղկացած 86 մեծադիր էջերէ՝ պարունակելով բաւական խնամով պատրաստուած և զեզագլտական ճաշակով վիմագրուած օրինակներու ճոխ հաւաքածոյ մը:

Ընդհանուր առմամբ իր պարունակած նիւթերուն մէջ անթերի է այս գործը: Brodésի ճիւղը խնամքով ցուցադրուած է երկին մէջ, գրերը, թաշկինակները լաւ են, porte feuille, porte cigarettes, abat-jour, fleur à coin, carafe, casquette, coussin, ևն. ճաշակաւոր գործեր են, chemiseները

աւելի խնամքի առարկայ դարձած են: Երկին արժէքը կ'աւելցունէ նկարներու բնական մեծութեամբ դրուիլը, նոյնպէս զարդերու դոյներուն որոշ բաժանումը և սահմանումը, ինչ որ գեղագիտական տեսակէտով աչքի զարնելիք յատկութիւն մըն է ինքնին ամէն արուեստագէտի քով:

Սակայն քանի մը պզտիկ թերութիւնները մատնանշել անշուշտ ենք թէ գործին արժէքը երբէք չպիտի պակսեցնէ:

Գործին մէջ կը պակսին Filet Richelieu, Broderie sur Lacis, tapisserieի point de natte, point de Riz, point de pique, point double են. բաժանումները որոնք կոկիկ և սիրուած գործեր են, նոյնպէս crochetի ընտրեալ մօտէններ, կիտիլուած Monogrammesներ, Lettresներ, patronsներ, Soutacheի ձևեր, Motif Broderieներ, filet brodéներ, որոնց երեւումով գործը շատ սիրուն երկ մը պիտի դառնար ամէն տան համար. և որովհետև գինը բաւական բարձր սահմանուած է, ընթերցողներն ու հետեւողները պարտ էր օժտուած տեսնային այս կատարելութեամբ ալ. սակայն, քանի որ Պր. հեղինակը կը խոստանայ Բ. գործ մըն ալ նուիրել մեզ, քաղցր է յուսալ թէ մեր յիշեալ թելադրութիւնները պիտի հաճի ի նկատ առնուլ և օգտուիլ մասամբ ատոնցմէ: Խնդրելի վերջին բանն էր նոյնպէս Տիար Միքայիլիտիէ և Պր. հեղինակէն՝ մաքուր թղթի վրայ ընել այդպիսի գեղագիտական աշխատութիւն մը, ինչ որ մեծ գոհողութիւն չպահանջեր, վասն զի պզտիկ հպում մը դիւրաւ կը ճմլէ և կ'եղծանէ արդի հրատարակութեան թերթիկները:

Ուրեմն կը մնայ մեզ ի սրտէ շնորհաւորել յարգելի հեղինակը որ մեզ կ'ընծայէ գաւառի մը խորէն գնահատելի գործ մը որ կողուած է մեծ ծառայութիւն մատուցանել մեր սեռին, իբրև գաւառածին մի արտադրութիւն: Կը մատնանշենք մերայնոց՝ հետեւիլ այս երկի ուղղութեան՝ ինչպէս նաև հեղինակին Մամոյ տակ գտնուած Բ. երկին:

Մեսիսն

ԱՐԱՔՍԻ ՆՈՒՐԵԱՆ

Ծաղիկի կամքադրութիւնը իր սրտագին ցաւակցութիւնը կը յայտնէ ծանօթ դեղադորձ Լեւոն էֆ. Կիւմիլչեանի, որ իր հայրը (ՄՏ. Յովակիմ Աղա Կիւմիլչեան) կորսնցնելու դժբաղդութիւնն ունեցաւ:

Նոյնպէս մեր խորին ցաւակցութիւնները՝ Մանգուսի գրաշարապետ Յակոբ էֆ. Հէքիմեանի, իր մօրեղբոր Վիլէն Աղա Յարութիւնեանի մահուան առթիւ:

ՄԾ՝ ԼԵՍԲ ԶԻՍ

Նուրբ մատերդ թացին սարսուռն
Սիրքիս նիզեր,
Ու ցունցերուդ սակ հեւաշունչ,
Թափուն թելերս փայտամրմունջ՝
Ամեն գիշեր
Պինդ պրկեցի չոփի, անհուն:

Հօր, մօր, ֆրոջ, եղբօր անգին
Սիրերն խապտո,
Սերն Աստուծու իսկ սիրական
Բու մեծ սերիդ մեջ հաշեցան
Հաշիչովն յար
Երբ փարեցայ երազ կեանքին:

Բայց ֆրիչով թուր անդարձ
Սիրս վանդակեդ,
Ու յուշերդ սարսուռն
Սուրբ քախիծիս կը ծիծաղին.
Մինչ քեզ յաւե
Տենչայ քափուր սիրս շայնաքաց:

Եկո՛ւր դարձեալ հոս՝ իմ կուրծքիս,
Վանդակիդ մեջ.
Դուն զիս հաշե, ես քեզ ապրիմ
Կոտորներուդ հսկեմ չոփն
Յաւերզն անվերջ.

Սէ՛ր — Տառապանք — մի՛ չեք զիս...
ՄԱՆՆԻԿ ԻՍԹԱՄԳՈՒԼԵԱՆ


ՅԱԶՈՐԴ ԹԻԻՈՎ
Ի ՄԷՋ ԱՅԼՈՑ

ՏԻԿԻՆ ՄԱՌԻ ՓԱՓԱԶԵԱՆ

(Ի՞նչ եղած է և ի՞նչ պէտք է ըլլայ յի կողմ մը ընթացքը)
շահեկան յօդուած:

ՕՐ. ՏԻՐՈՒՀԻ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ

(Եզանակի արդուզարդներ. վայելչազգեստ տիկնոջ մը պատմություն):





ՅԱՐՈՒԹԻՒՆ Ա.ԼԻՔՍԱՆԵԱՆ
(Դերասան)

ՔԱՏԵՐԱԿԱՆ ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿ ՄԸ

Ա.ԼԻՔՍԱՆԵԱՆ ԽՈՒՄԲ

ԱՌԱՋԻՆ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՑԵՐԵԿՈՅԹԸ

Բերայի թատերասէր հասարակութեան և ընտանիքներուն մէջ
օրուան խօսակցութեան առարկան է թատերական այն նոր ձեռ-
նարկը որուն լուրը հաղորդեց արդէն Մանգումե:

Օսմ. Բեմին առաջնակարգ արուեստագէտներէն Տիմ. Հէքիմ,
Կան, Պ. Ալիքսանեան և Պ. Հօլաս նոր խումբ մը կազմած են:

որ պիտի ներկայացնէ ընտանեկան և յուզիչ տուամներ: Խուժըը կը
գտնուի անզուգական հակառակորդ դերասան Յարութիւն էֆ.
Ալիքսանեանի վարչութեան տակ և առաջին դեղարուեստական
մեծ ցերեկոյթը պիտի տրուի:

ԱՅՍ ԿԻՐԱԿԻ ՅՈՐԵԿ, ԺԱՄԸ ՏԻՆ ՎԱՌԻԷԹԻԻ ԹԱՏՐՈՆԸ.

Աւելորդ կը համարինք ծանրանալ արժանիքներուն և կարո-
ղութիւններուն վրայ նոր խուժըը կազմող արուեստագէտներուն,
որոնք արդէն քաջածանօթ են հասարակութեան որ ամէն առիթի
մէջ միշտ լաւագոյն գնահատութիւններով և խանդավառ ծափնե-
րով ողջունած է այդ երեք առաջնակարգ արուեստագէտները:

Ցերեկոյթը պիտի տրուի ի պատիւ նոր խուժըին կազմակեր-
պիչ ամուլին:

Տէր ԵՒ ՏԻԿԻՆ ԱԼԻԲՍԱՆԵԱՆԻ

երաժշտական և թատերական հաճելի պէսպիսութիւնով մը:

Հանդէսին բացումը պիտի կատարուի քառմենի հոչակաւոր Օ-
բերային վերջին տեսարանով, զոր սիրայօժար մասնակցութեամբ
պիտի երգեն ամաթէօս արուեստագէտներ ի պատիւ Տէր և Տիկին
Ալիքսանեանի:

Ցերեկոյթին բուն խաղը պիտի ըլլայ երեք արարով խիստ
յուզիչ տուամ մը

ԼԻԻՍԻ ՏԻՏԻԷ

որուն վրայ բան մը գրել նախապէս, անոր անսովոր հրապոյրէն
և տպաւորութենէն բան մը պակսեցնել ըսել է: Այդ տուամը որ
խիստ գնահատուած ու ծափահարուած է ամէն բեմերու վրայ,
ընտանեկան շատ սրտադրու և արցունքոտ հիւսուածք մը ունի, և
հանդիսատեսին ուշադրութիւնը վառ կը պահէ մէկ ծայրէն միւսը:

Այս առաջին մեծ ցերեկոյթը պիտի աւարտի խիստ զաւեշտա-
կան և քրքջալիւր կատակերգութեան մը մէջ ուր բեմ պիտի դայ Օամ.
բեմին առաջնակարգ կատակերգակներէն մին որ ցարգ իր մասնա-
ւոր խումբով համբաւ շինած էր:

Վստահ ենք որ, երբ այս ցերեկոյթին մասնագիտական մասը
մեծապէս հաճոյական և պէսպիսութեամբ ղարդարուն կազմակեր-
պութիւն մը ունի, միւս կողմէ մեր թատերասէր ընտանիքները ո-
րոնք միշտ գնահատած են հայ արուեստագէտները, Կիրակի ցորեկ,
ժամադիր պիտի ըլլան Բերայի Վառիէթէ թատրոնին մէջ, ծափա-
հարելու և քաջալերելու երեք առաջնակարգ արուեստագէտները,
իրենց անդրանիկ քայլին մէջ:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԷՖ. ԱԼԱՃՍՃԵԱՆ

Ծաղիկի նախորդ թիւը հրատարակելու էր արդէն երբ խորին ցաւով տեղեկացանք թէ Փռւնջի արտօնատէր, Համբարձում էֆ. Ալաճաճեան կնքած է իր մանկանացուն, յանկարծական մահուամբ:

Հանգուցեալը երկրագոյն օրագրողն էր մեր մէջ, եւ քառասունըչորս տարիէ ի վեր կը հրատարակէր «Փռւնջ» շաբաթաթերթը, իր ինքնայատուկ ուղղութիւնով: Իր դրութիւններուն մէջ բաւական խիզախ ոճ մը կը գործածէր, երբ քննադատութեան մը շուրջը դառնար գրածը: Վերջին տարիներս իրեն կ'օժանդակէր իր երկջորդին Սիմօն էֆ. Ալաճաճեան, որխոստմաւից երիտասարդ մըն է:

Հանգուցեալին յուղարկաւորութիւնը վայելուչ հանդիսաւորութիւնով մը տեղի ունեցաւ նախընթաց ուրբաթ օր, Սկիւտարի Ս. Խաչ եկեղեցիին մէջ, նախազահութեամբ Տ. Տ. Երէցեան եւ Վեհապետեան Սրբազաններուն, և մասնակցութեամբ բազմաթիւ վարդապետներու և քահանաներու: Մեր ցաւակցութիւնները:

Ա.ԿՈՍՅԷՆ ՏԱՌԱՊՈՂՆԵՐՈՒՆ

Մեր ընթերցողներուն ուշադրութիւնը կը հրաւիրենք ծանօթ առամնաբոյժ Մ. Մարտիրոսեան էֆ. ի ազդէին վրայ, որ հրատարակուած է թերթիս մէջ:

Համակրելի առամնաբոյժը որ պատուաւորապէս և գնահատելի կենցաղագիտութեամբ ի գործ կը դնէ իր արուեստը, Բերայի մէջ, իրեւ ճարտար ու վկայեալ առամնաբոյժ, ջերմապէս յանձնարարելի է ամէն անոնց համար որոնք կը տառապին ակուայի հիւանդութենէ:

ԳՐԱԿԱՆ ՆՈՒԷՐ. — Բերա, Այնալը Չէչմէ, ծանօթ սափրիչ և վարսավիրայ Մեծ. Մեղքոն էֆ. Գմողեան 1 տարեկան «Ծաղիկ» նուիրեց իր ծննդավայրին Պարտիզակի Ազգ. վարժարանին: Գրասէր սափրիչը 1 տարեկան ալ «Մանդումէ» նուիրած է նոյն վարժարանին:

ՄԵԿՆՈՒՄ. — Մարաշի նորընտիր Առաջնորդ Գեր. Տ. Կորին վրդ. այսօր կը մեկնի իր պաշտօնատեղին, համակիրներու սուուարթիւ մը ձգելով իր ետին:

ՔՐԷՍ ԻՏԷԱԼ ՔԱԼՕՏԵՐՄԻՆ

Ֆարքի բժշկական կաճառէն վկայեալ քիմիագետ H. Flageth

կողմէ պատր Է ստուած:



Քալօտէրմին կոչուող իտէալ քոէմը մեծ համարաւ մը չաճած է իր չատ մը յատկութիւններուն և ըարերար արդիւնքներու շնորհիւ: Կարելի է բացարձակապէս յայտարարել թէ ան կը դերաշահէ միւս բոլոր նմանօրինակ արտադրութիւնները, և ո՛րքէն ան նմանութիւն չունի քօլտ-քրեմներու հետ:

Քալօտէրմինի իտէալ քոէմը լուծելի ըլլալով, ո՛րքէն է օճառէ աւելի լաւագոյն կերպով կը մաքրէ

մորթը: Գերազանց քոէմն է անիկա դէմքի և մարմնի մասածի համար:

ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Ձեռքերու համար.— Բացարձակապէս օգտակար ձմեռնակներու, ձեռքի թեթեւ պատտուածքներու համար, բաւական է ձեռքերը չիկել անով, ամէն իրիկուն: Օճառի տեղ երբ մարդ Քալօտէրմին գործածէ, կակուղ և գեղեցիկ մորթ մը կ'ունենայ:

Դէմքի համար.— Քոէմէն թեթեւ խաւ մը տարածելու է դէմքին վրայ, և կերցնելու է զայն աղէկ մը, նուրբ լաթով մը որ քիչ մըն ալ խոնաւ ըլլայ, յետոյ մաքուր ջուրով լուալու է դէմքը: Իսկ Քալօտէրմինի բուտրան գործածելու համար պէտք է քոէմէն պզտիկ խաւ մը տարածել և յետոյ քսուիլ:

Դէմքի, ձեռքի վրայի բիծերը, և այլն ջնջելու համար իրիկունը պէտք է Քալօտէրմինի խաւ մը տարածել և մինչեւ ատու թողուլ այնպէս:

Պարոններ.— Քալօտէրմինի իտէալ քոէմը հրաշալիօրէն և անմիջական կերպով իսկ կը դարմանէ անձիին պատճառած հուրքը:

ՔԱԼՕՏԵՐՄԻՆԻ ԻՏԷԱԼ ԲՈՒՏՐԱՆ

Քալօտէրմինի իտէալ բուտրան որ Քալօտէրմինի Քոէմին լրացուցիչն է բրնձածաղիկէ շինուած է և կը զրեթէ անտեսանելի է, փափուկ, և եթերային:

Երկուքն ալ, այսինքն քե Քալօտէրմինի Քոէմը եւ քե բուտրան կը գտնուին անուշահոտութեանց զլխաւոր վաճառատուներու և ղեղարաններու մէջ:

Ն Ո Ր
Բ Ա Ռ Ա Գ Ի Ր Ք

Հ Ա Յ Ե Ր Է Ն Լ Ե Ջ Ո Ւ Ի

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Չ Ա Ր Դ

Ս Ի Մ Ո Ն Գ Ա Բ Ա Մ Ա Ճ Ե Ա Ն Ի

Հրատարակեց՝ Ռ. ՍԱԳՍԵԱՆ

Ա. հատոր հրատարակուած. գին 20 զրուշ.

Բ. » ընդ մամուլ

Բաժանորդագրութիւնը կը շարունակուի զվերջ գեկտեմբերի.
 2 հատոր միասին 30 զրուշ կանխիկ: Փափաքողք պէտք է փու-
 թան դիմել հետեւեալ կեդրոնը:

ՍԱԳՍԵԱՆ ՏՊԱՐԱՆ, Ղալաթիա Գարշապուտ խան թիւ 7.

Կը գտնուի նաև բոլոր գրաված ստեղծումներուն քով:

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Ե Ց Ա Ի

Օ. ԱՐՋՈՒՄԱՆ ՁՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ա Ղ Ջ Կ Ա Ն Վ Տ Ա Ն Գ Ը

Դրքոյկ մը որ սահմանուած է զգուշացնել և պահպանել մա-
 տաղատի աղջիկներն ու մանկամարդ կիները, որոնք փորձու-
 թեան և վտանգի հանդէպ կը գտնուին:

Գինն է 2 դահեկան

Կը գտնուի բոլոր գրաված ստեղծումներուն քով և կեդրոնատեղին
 էՍագանան Տպարան:

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍՍԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԷՅԻ ԽԱՌՆՈՒՐԳՆԵՐ

ՄԻՏՏ ԱՃԱՆ ՈՒ ԹԱՐԻ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ

ԻՍՍԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏԻՐ. ԱԺԱՆ

Ե Ի

ՀՈՏԱԻԵՏ ԹԷՅԵՐ

Կ. Պոլիս, Պաճճե Գափու, ճեղալ-Պեյ խան, թիւ 10

44—50

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Գ, ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

Քերա, Մեծ փողոց, թիւ 200 կայարա-Սերայի Լիսեիմ դեմ

Դշ. Եշ. Եք. օրերը առաւօտեան կանուխէն մինչեւ իրիկուան

ժամ 11½. Բշ. Դշ. Ուր. օրերը Եէն մինչեւ 11½

Կիրակի օրերը ժամադրութեանը

14—50